Արձանագրություն N 3

<< ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/5>> ծածկագրով ՀՀ Կոտայքի մարզի ք. Աբովյանի հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարանի հիմնանորոգման որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի (շարունակություն)

ք. Երևան 25.04.2017թ
ժամը 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Ջանջուղազյան
Հանձնաժողովի անդամներ ՝	Ռ. Եղիազարյան/ գնահատող /
	Գ. Գևորգյան /գնահատող/
	Կ. Բայբուրտյան/ բացող /
	Ա. Գրիգորյան/ բացող /
Հանձնաժողովի քարտուղար՝	Տ. Վասիլյան

1. <<ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/5>> ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա անհամապատասխանության շտկման մասին

(Ա. Ջանջուղազյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ <<ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/5>> ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում <<ՄԱՌՔ>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Տեղեկություններ <<ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/5>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման արդյունքների մասին

(Ա. Ջանջուղազյան)

2.1 Հիմք ընդունելով մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը՝ գնահատող հանձնաժողովի կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով հայտերը գնահատվել են հետևյալ կերպ.

Մասնակիցների անվանումը	Հայտի գնահատականը
<<Հուսալի Կամար>> ՍՊԸ	բավարար
<<Մառք>> ՍՊԸ	անբավարար
<<Արման- Թաման>> ՍՊԸ	բավարար
<<Բագարանի բարիք>> ՓԲԸ	բավարար
<<Նորայր և ընկերներ>> ՍՊԸ	բավարար
<<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ	բավարար

**Մասնակցի անբավարար գնահատականի հիմնավորումը ներկայացված է սույն ընթացակարգի թիվ 2 արձանագրության 2.4 և 2.5 կետերում:*

3. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

3.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

3.2 Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին՝ <<Հուսալի Կամար>> ՍՊԸ-ին, երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

3.3 Հրավերով սահմանված ժամկետում 3.2 կետում նշված փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ կներկայացվի հաջորդ տեղ զբաղեցնող մասնակցին

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. <<ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/5>> ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

4.1 Պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2017 թվականի մայիսի 2-ին ժամը 12:00-ին ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի Նախագահ՝	----------	Ա. Ջանջուղազյան
Անդամ՝	----------	Ռ. Եղիազարյան
	----------	Գ. Գևորգյան
	----------	Կ. Բայբուրտյան
	----------	Ա. Գրիգորյան
Քարտուղար	----------	Տ. Վասիլյան